

Տարեկան գինը 10 ռուբլ կէս տարվանը 6 ռուբլ:
Առանձին համարները 5 կոպէկով:

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ:

Օտարաբարաբար գիտում են ուղղակի
Тифлис. Редакция „Мшакъ“

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Նախի կիրակի և տօն օրերից)

Հայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով:

Հայտարարութիւնների համար վճարում են
խրաքանչիւր բառին 2 կոպէկ:

ՄՇԱԿ

„ՄՇԱԿ“ ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱ- ԿԱՆ ԼՐԱԳԻՐ 1880 ԹԻՒՆ

ԿՐ ՀՐԵՏԵՐԵԿՎԻԷՄԵՆ ՕՐ, բացի տօն և տօներէի հե-
տեւալ օրերից:

Լրագրի դիրքը և պրօգրամման նոյն են մնում: Մենք ստանում ենք ՄԱՓՈՒՄԵՆ ՀԵՌԵՂԻՐՆԵՐ: «ՄՇԱԿ» տարեկան գինը 10 ռուբլ է, կէս տարվան 6 ռուբլ: Գրվել կարելի է ՄԻՆՅՆ ԽՄԲԱԳՐԱՏՈՒՆԻ մէջ:

ԵՌԱՆՁԻՆ ՀԵՄԵՐՆԵՐԸ ծախվում են 5 կոպէկով հատր:
Օտար քաղաքներից պէտք է դիմել հետեւալ հասցեով ТИФ-
ЛИСЪ Редакция „Мшакъ“.

Խմբագիր—հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ՀԵՏԵՒԱՆՔԸ ՈՒՐԱԽԱԼ Ի ԶԵ

Նորերում կատարվեցաւ Կ. Պօլտում մի իրողութիւն, որ ըստ երևոյթիւն շատ ուրախալի է, բայց որի հետեւանքը շատ ուրախալի չէ կարող լինել: Մենք խօսում

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՀԱՅ ԵՐԻՏԱՍԱՐԳՈՒԹԻՒՆԸ

Գերմանական ուսանողը չէ բաւականանում նը-
բանով, ինչ որ սովորում է համալսարանի ամբի-
ոնից: Նա կարդում է համարեա բոլոր նշանաւոր
հեղինակութիւնները, որ վերաբերում էին իր ա-
ռարկային: Այդ բաւական չէ, նա յաճախում է
զանազան ուսումնական հիմնարկութիւնների մէջ:
Դիցուք թէ մի ուսանող ընտրել էր իր մասնագի-
տութեան համար քաղաքական տնտեսութիւնը: Մի
և նոյն ժամանակ նա անգամ է դառնում զանա-
զան ժողովների և զանազան ընկերութիւնների,
որպէս նա՝ աշխարհագրական, բժշկական, երաժշ-
տական, հնագիտական և այլն: Մի և
նոյն ժամանակ կարելի է տեսնել նրան մի
գրատան մէջ քրքրում է հին ձեռագրներ, ուսում-
նասիրում է մի անծանօթ արեւելեան լեզու, կամ
թանգարանի մէջ քննում է հին դրամներ և կամ
հետաքրքրվում է զանազան հաղորդագրուած բաներով:
Այս բոլոր աշխատութիւններից յետոյ, նա ժամա-
նակ է դառնում պարագելու մարմնամարզու-
թեամբ, վարժվելու զինաշարժութեան մէջ, կամ
զուարճանալու օրօրօրութիւնով: Որեքը, ժամերը,
րոպէները նրա մօտ այնպէս հաշված են, որ նա
ամեն ժամանակի համար զբաղվում էր ունի: Եւ
այս է պատճառը, որ գերմանական ուսանողը ու-
նի չափից դուրս բազմակողմանի հմտութիւններ:
Արեղջ օրը աշխատելով մի բան սովորել, նա
զարձեալ էրան յետ չէ պահում սովորական զուար-
ձութիւններից: Նրան կը տեսնես մի հիւրանոցում,

չընկալած իր ընկերներով, գարնջուր է խմում,
խօսում է, դատում է և վիճում է: Մի բան, որ
չէ հետաքրքրում գերմանական ուսանողին, այդ
է՝ զբաղվել պօլիտիկայով: Նա քաղաքական պրօ-
պագանդիստ չէ, բայց հասարակական գործիչ է: Նա
սիրում է երկու բան. գիտութիւն և գարնջուր:
Կինը մի առանձին դեր չէ խաղում գերմանա-
կան ուսանողի կեանքի մէջ: Նա ոչ թող է տա-
լիս իրան ֆրանսիական ուսանողի նման գրիգէտ-
ներին հետ բուլվարները չափելի, և ոչ ուսում-
կան ուսանողին նման սիրուհու հետ է ապրում:
Նա իր կրքերի մէջ չափաւոր է և համեստ, բա-
ցարձակ ակտիւնով չէ հրապարակում: Այս է
պատճառը, որ գերմանական ուսանողը ամեն մի
պատուաւոր ընտանիքի մէջ մուտք ունի. նրանից
չեն վախենում: Կինը վրա նայում է նա, որպէս
մի քնքրող առարկայի վրա, որին եթէ զօրաւոր
գործերի մէջ զգէր, կարող էր շուտով կոտորվել:
Եւ այս պատճառով, ուսումնական ուսանողին նման
նա կնոջը չէ ընտրում որպէս պրօպագանդայի
գործիչ: Նա համարում է կնոջը մի գեղեցիկ ա-
րարած, որով կարելի էր զբաղվել առանց ծանձ-
րանալու, որով կարելի էր զուարճանալ առանց
տխրելու—այդքանը միայն: Կինը նրան խելքից
չէ հանում. բայց երբ սիրում է, սիրում է միայն
ամուսնանալու համար:
Ուսանողական կազմակերպութիւնը ամեն գեր-
մանական համալսարանում բաժանվում է երկու
որոշ մասերի, մէկը, գ ու Ն ա լ ո Ր Ն Ե Ր, որոն-
ցից կազմված են զանազան առանձին խում-
բեր (корпорация), որոնք տարբերվում են
իրանց գլխավորների և կուրծքի ժապաւնների
գոյներով,—իսկ երկրորդը, հ ա ս ա ր ա կ ու ս ա-
նոցները, որոնք չեն համարում իրանց միջեւ
խումբերի կամ կորպորացիաների անդամ:
Գոհնաւոր ուսանողների խրաքանչիւր խումբը
կամ կորպորացիան ունի իր առանձին դրօշը, նշա-
նաւանդ, օրէնքները, սովորութիւնները, ծէսերը և
վերջապէս պրինցիպները: Մէկը, օրինակ, ներկա-
յացեցիչ է աղետալիտական սկզբունքի, միւսը

ենք հակահասունեան մի բանի
հայ կաթօլիկ ընտանիքների դէպի
լուսաւորչական եկեղեցի վերա-
դառնալու մասին:

Մենք մի բանի անդամ արդէն
յայտնած էինք այն միտքը որ
այն ազգը, որ իր ազգային գո-
յութիւնը հիմնում է միմիայն
կրօնական սկզբունքի վրա,—դա
ազգութիւն չէ կարող համար-
վել Հայ կաթօլիկները, որոնք
վերադարձան այժմ դէպի լուսա-
ւորչական եկեղեցու գիրկը, իրանց
արած քայլով ապացուցին, որ
մինչև այժմ, իրանց հայ չէին
համարում, բանի որ հայ դառնա-
լու համար, անհրաժեշտ համա-
րեցին ընդունել լուսաւորչական
դաւանութիւնը:

Բայց կասեն, որ հակահասու-
նեանները ուրիշ եւք չունէին ի-
րանց գրութիւնից, երբ թիւքաց
տէրութիւնը այլ ևս չէր ճանա-
չում նրանց որպէս մի անկախ
եկեղեցական համայնք, այլ պար-
տաւորեցնում էր նրանց եկթարկ-
վել Հասունի, հայ-կաթօլիկների

այդ միակ ճանաչմած պատրիարքի
իրաւասութեանը, ուրեմն պարտա-
ւորեցնում էր ազատամիտ հայ-
կաթօլիկներին եկթարկվել անդ-
րալեւն այլին կաթօլիկ եկեղե-
ցու իրաւասութեանը...

Հատ կարելի է որ հակահա-
սունեանները ուրիշ եւք չունէին,
բայց այնու ամենայնիւ նրանց
վերջին արած քայլը հետեւանքը
շատ անմխիթար է:

Նախ այդ արած քայլը, ինչ-
պէս ասացինք, դարձեալ ապա-
ցուցանում է որ հայը միմիայն
կրօնական ժողովուրդ է և երկ-
րորդ՝ որ հակահասունեանները
անցնելով դէպի լուսաւորչական
եկեղեցին շատ վատ ծառայու-
թիւն են արել թիւքաց հայերի
ընդհանուր ազգային գործին, ո-
րովհետեւ իրանք միանալով լուսա-
ւորչականների հետ, հաջգին, ան-
անցնելի բարոյական անդունդ են
թողնում լուսաւորչական և հա-
սունեան կաթօլիկ հայերի մէջ: Հա-
կահասունեանները միակ կապող
օղակ էին կազմում շղթայի երկու

սիւղված պրօֆեսօրի տան առջև և արտայայտում
են նրան իրանց յարգանքը: Երբեմն այսպիսի դե-
մոնստրացիաներ կատարվում են, որպէս արտա-
յայտութիւն զանազան հասարակական ցոյցերի,
երբ կատարվում էր մի անարդարութիւն օրէնքի
կողմէից: Ուսանողները այդ ժամանակ սաստիկ
վրդովվում են, յուզվում են և խումբերով հրա-
պարակ են դուրս գալիս, իրանց բողոքը յայտնե-
լով զանազան ցոյցերով: Ժողովուրդը միշտ իր
ձայնը խառնում է ուսանողների ոգևորված եր-
գելին և նրանց աղին բարկութեան ձայնին:

Գ ու Ն ա լ ո Ր ուսանողները, որ առհասարակ
նշանաւոր են իրանց քաջութեամբ, համարձակու-
թեամբ և անճամարտութեամբ, միշտ պատրաստ են
վրէժխնդիր լինել մի ամենաչնչին վիրավորանքի
համար պատուի դէմ: Այս պատճառով մենամար-
տութիւնը նրանց մէջ այնքան սովորական է, որ-
պէս մի գաւաթ գարնջուր խմելը: Եւ շատ ան-
գամ կարելի է տեսնել երեք բոլորովին սպիտե-
րով այլանդակված ուսանողներ, որ ստացել էին
զանազան մենամարտութիւնների մէջ: Բայց նոյն
ուսանողը, երբ իր գարնջուրի դէմքով կանգնում
է ամբիոնի վրա և կարդում է մի ոգևորված ձեռ-
այն ժամանակ առանց հիացմունքի չէ կարելի չը
լսել նրան: Նա որպէս յանգուկ է դէպք բանեց-
նելու մէջ, այնքան էլ ընդունակ է ընդհանուր
մարդկային բարձր գաղափարներ արտայայտելու:
Այսուամենայնիւ, գ ու Ն ա լ ո Ր ուսանողներին
հասարակ ուսանողների հետ համեմատելով,
առաջինները այնքան նշանաւոր չեն լինում իրանց
աշխատասիրութեամբ: Քաջութիւնը մենամարտու-
թեան մէջ և զորութիւնը գարնջուր խմելու—
ահա երկու առարկաներ, որոնցով պարծնում
են նրանք: Եթէ գերմանական ուսանողների մէջ
կան տոկոսն աշխատողներ և ճշմարտագէտ գի-
տաւորներ, որոնք ոչ մի կորպորացիայի չեն
պատկանում:

Պէտք է նկատել, որ այլ և այլ կորպորացիա-
ներ, որոնք իրանց սովորութիւններով և պաշ-

Հակառակ և թշնամի ծայրերի մէջ նրանց միջոցով միայն կա-
րելի էր յուսար գտնէ ժամանակով
ազգային հաշտութիւն հաստա-
տել մոլեռանդ կաթօլիկ և լուսա-
ւորչական հայի մէջ... Այժմ շղ-
թան պատուած է, միութեան
կապ չը կայ, երկու ծայրերը մի-
մեանցից կատարելապէս կտրված
են:

Վեր առնենք մի օրինակ մեզ
հարեան ազգի, վրացիների դուռ-
թիւնից, դիցուք նոր նուաճված
երկրում:

Ինչպէս յայտնի է Լազիստանի
և Աջարիայի այն մասի մէջ, որ
վերջին ուսած թիւրքաց պատերազ-
մից յետոյ միացաւ Ռուսաստանին,
կան մահմետական բուն թիւրքե-
րը և կան նոյնպէս և մահմետա-
կան վրացիները: Այժմ յունադա-
ւան կամ կաթօլիկ վրացիները
ձգտէին ժամանակով մօտենալ ի-
րանց երկրի մահմետական բուն
թիւրքերին, աշխատէին ընդհանուր
դարձնել այդ վերջինների հետ ի-
րանց հասարակական, տնտեսական,
բարոյական և ուսումնարանական
շահերն ու գաղափարները:—Նրանք
կարող էին յուսալ այդ նպատա-
կին հասնելու միմիայն մահմետա-
կան վրացիների տարրի միջոցով,
որ թէև կրօնով մահմետական է,
բայց լեզուով ու ազգութեամբ
վրացի է և ժամանակով անշուշտ
կը կազմի միացնող կապ երկու
Հակառակ տարրերի մէջ՝ բուն

մահմետականների և քրիստոնեայ
վրացիների մէջ: Բայց եթէ վրա-
ցիները նախ և առաջ աշխատէին
բոլոր մահմետական վրացիներին
քրիստոնեայ դարձնելու,—այնու-
հետեւ երբեք էլ յոյս չը պէտք է
ունենային որ և է բարոյական
ներգործութիւն ունենալ իրանց
երկրացի բուն թիւրք մահմետա-
կան ազգաբնակիւթեան վրա, ո-
րովհետեւ նրանց և թիւրքերի մէջ
բոլոր կապերը կտրված կը լինէ-
ին և կը մնար մի անանցնելի, ա-
հագին անդունդ երկու ծայրահեղ
կէտերի մէջ:

Նոյնը կարելի է ասել և Հա-
յաստանի մահմետական հայերի
վերաբերութեամբ:

Գուցէ մեր բերած օրինակը
ծայրայեղ և տարօրինակ կերևայ
շատերին,—բայց նա ունի շատ
մեծ անալոգիա մեր այսօրվայ խօ-
սակցութեան առարկայի հետ:

Բոլորովին ուրիշ բան կը լինէր,
եթէ թիւրքիայի բոլոր հայ-կա-
թօլիկները, հասունեան, թէ հա-
կահասունեան, նոյնպէս և հայ
բողոքականները, կամ միայն հա-
կահասունեան կաթօլիկ հայերը
և բողոքական հայերը, առանց
լուսաւորչական դառնալու, այլ
պահելով իրանց կրօնը, ասէին
հայ լուսաւորչական պատրիարքա-
րանին. «Ինչպէս Ս. Ստեփանօսի
դաշնագրի 16-որդ յօդուածը,
այնպէս և Բերլինի դաշնագրի 61
-որդ յօդուածը պահանջում են

բարենորոգումներ հայերով բնակ-
ված երկիրներում՝ առանց յիշե-
լու արդեօք կաթօլիկ, բողոքական
թէ լուսաւորչական կրօնի են
պատկանում այդ հայերը, ուրեմն
մենք մնալով մեր կրօնի մէջ և
ճանաչելով մեզ վրա մեր եկեղե-
ցու կրօնական իրաւասութիւնը
կրօնական հարցերում, կամենում
ենք այսուհետեւ քաղաքական ընդ-
հանուր գործերում ճանաչել լու-
սաւորչական հայոց պատրիարքա-
րանի իրաւասութիւնը և ինդ-
րում ենք ձեզ հրաւիրել մեր ներ-
կայացուցիչներին ձեր ազգային
Ժողովը, որպէս զի միասին խոր-
հէինք, միասին գործէինք Հայաս-
տանում մտցնելու վերանորոգու-
թիւնների մասին, միասին բողո-
քէինք մեր հայրենիքում գործվող
հարստահարութիւնների դէմ և
վերանորոգութիւնների մտցնելու
ուշանալու դէմ:»

Այն ժամանակ մենք կասէինք,
որ թիւրքիայի հայերը հասան թէ
քաղաքական և թէ հասարակա-
կան հասունութեանը, հասան
ազգային զգացմունքի ինքնաճա-
նաչութեանը:

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ՆՈՐ-ՆԱԽԻՋԵՆԱՆԻՑ

5 Նոյեմբերի

Ռուսիան Սմբոսիտ հայր վերջապէս հասաւ
և Նախիջևան: Ճշմարիտ ասել, «Մշակի» հրատա-

րակած մի քանի նամակներ կարդալով, մենք փոքր
ինչ նախապաշարված էինք արժ. հօր դէմ. առ-
կայն նա բաւականին զրաւեց մեր համարձակ-
նը: Նորա երէկվայ քարոզի պէս համարձակ,
աղու, կենդանի, անպաճօճ և ժողովրդին լիովին
մատչելի խօսք մենք վաղուց արդէն չէինք լսել և-
կեղեցու բեմից: Մեր կարծիքով նա իսկ և իսկ ժո-
ղովրդական քարոզիչ է, ուստի և հասկանալի է,
թէ ինչու, չը նայելով իր դէմ յարուցված կառ-
կածներին, ամեն տեղ յաջողել է բաւականին գու-
մարներ հաւաքել: Նորա երկրուայ քարոզից պարզ
երևում էր, որ առ այժմ հայր սուրբը շատ անգոհ
է մեր ժողովրդից: Իր այս դժգոհութիւնը նա
յայտնեց բաւականին կծու խօսքերով, որը յիշուի
զիպան ունիդիւնների սրտին, որովհետեւ ճշմարիտ
էին: Երեկայեցեք, որ հ. սուրբը արդէն մի քա-
նի օր է որ քաղաքի մէջ է և դեռ չէ կարացել
ոչ մի տեղ մի քանի հայ գումարված տեսնել, որ
յայտնէր նոցա իր դատը նպատակը: Ինչո՞ւն տուել
են բնակութեան համար մի գետնափոր ծակ, ստո-
րին յարկում, ուր, իր ասելով, նա կարող չէ դի-
մանալ և ոչ մի չաբաթ, ուր նա կը հիւանդանալ
և թէ ամօթ է այդպէս անբաղաւաճ ընդունել
մի հիւր, որ եկած է մեր հեռուոր եղբայրների
վերքին ու վտերը մեզ պատմելու համար: Քա-
րոզից մի օր առաջ Ս. Լուսաւորիչ եկեղեցու մի
աւագ քահանայ, եկաւորի մասին ծանուցում անե-
լիս, ասել էր թէ «մի վարդապետ եկած է ժողո-
վարարութեան համար:» Հայր սուրբը սատարի բար-
կացած էր այդ ժողովարարութիւն բառի վրա և
տեսնելով երէկ, որ եկեղեցու մէջ ժողովուրդը առ-
կաւաթիւ էր, կարծեց թէ մերայինք վախեցել են
եկեղեցի գնալու, որպէս զի նորան փող չը տան:
«Նախիջևանի ժողովուրդը միայն ջատկին և ծնըն-
դեան տօներին եկեղեցի կուգայ, կանչեց նա. սո-
վորաբար քրիստոնէ կը յաճախէ: Ես եպիսկոպոս
չեմ, որը բարձր կը քալի, ես մի հասարակ վար-
դապետ եմ և ինձ ներելի է երթալ և ձեր քրիս-
տոն, ձեր սիրած ակումբները. ես ձեզ այնտեղ
կը գտնեմ և յոյս ունիմ, որ ձեզ հետ մի քանի
ժամ անցունելէս յետոյ դուք զիս բարեկամ կը
ճանչնաք և խնդիր սիրով կընդունէք:» Անճա-
կան բացատրութիւններից յետոյ իր երկար ճառի
ընթացքում քարոզիչ հայրը խօսեց այս բնաբանի
վրա, թէ նոր քրիստոնեային և նոր առաքելութե-
անը պէտք են, և մենք տեսանք որ նրա ջերմ
խօսքերը ազդու ապաւորութիւն գործեցին ունին-
դիւնների վրա: Գուր կանգնել էք հոյակապ տա-
ճարներ, ասաց նա մօտաւորապէս, ուկով, արծա-
թով և գոհարներով պատել էք սուրբերի պատ-
կերները, չինել էք փառաւոր տներ (անպիտան
գետնափորներով հանգրծ), մէջը շարել էք ձօն

տօնական ձևերով այժմ քառասյական բնաւորու-
թիւն են ստացել, ուրիշ ոչինչ չեն, եթէ ոչ Գեր-
մանիայի միջնադարեան ապիտոթեան զանազան
ուխտերի և կարգերի մի նմանութիւն, որ անցել է
ուսանողական կիսմերի մէջ: Այժմ այդ մաշված
սովորութիւնները հնամալու և մօրալից ընկնելու
վիճակին են հասել: Եւ որպէս հակակռօնութիւն
դ ու ն ա ռ ո լ ե ռ ի ժողովների, վերջին ժամա-
նակներում կարծիք են ուսանողական
ը ն դ հ ա ն ու ռ ժողովներ, աւելի լայն և ըն-
դարձակ նպատակներով և ժամանակակից սկզբուն-
քների վրա: Այդ ժողովներին մասնակցում են հա-
տարակ ուսանողները և երբեմն նրանց մէջ լինում
են պրօֆէսորներ:

Բայց մի բան, որ պէտք է նկատողութեան առ-
նել, այն է, մինչդեռ մի ուրիշ պետութեան մէջ
չորս-հինգ ուսանող մի տեղ հաւաքվելիս, մի ժո-
ղով կազմելիս, միշտ կառավարութիւնը կառա-
վարութիւն է նպատակ նրանց վրա,—գրա ընդհակա-
ռակն, գերմանական ուսանողներին տուած է
այնքան ընդարձակ ազատութիւն, որ նրանք կա-
րողանում են վերս յիշած կորպորացիաների նման
առանձին առանձին խումբեր կամ ժողովներ կազ-
մել, ամենին նրանցից չեն վախենում: Գերմանա-
կան ուսանողը իր հայրենիքի հաւատարիմ դա-
ւան է: Եւ այդ ցոյց տուեց նա վերջին ֆրանս-
պրուսական պատերազմի ժամանակ: Նա թողեց
համալսարանը և անցաւ կռիւի դաշտի վրա:

Մինչև այստեղ ինչ որ խօսվեցաւ, վերաբերում
է բուն գերմանացի ուսանողներին, հիւսն տեսնենք,
ինչ են անում այնտեղ հայ ուսանողները:

Հայ ուսանողները ոչ մի կօրպորացիայի մէջ
չեն մտնում, նրանք պատկանում են հասարակ
ուսանողներ թիւին: Բայց որպէս հասարակ ուսա-
նող եւ, հայերը չունեն այն բազմակողմանի պա-
րագմունքները, որոնցով, բացի իր մասնագիտու-
թիւնից, զբաղված է լինում բուն գերմանական
ուսանողը: Օրինակ, հայ ուսանողը ոչ մի ուսում-
նական ժողովի և ընկերութեան մէջ չէ մտնում.
ոչ մի ուրիշ բան, որպէս են մտզվեալ, մարմնա-

մարզութիւն և այլն, չէ սովորում, և որպէս
Մասկովյում կամ Պետերբուրգում, այստեղ էլ
նոյնպէս դուրս չէ գալիս իր հայ ընկերներին նեղ
չընալից: Ես մի քանի գերմանական հայ ուսանող-
ներ միայն ճանաչում եմ, որոնց կարելի է բացա-
ռութիւն համարել: Իսկ միտցածները ճանաչում
են միայն համալսարանի չինութիւնը, իրանց պրո-
ֆէսորին և իրանց ընտրած աւարկան, ուրիշ ոչին-
չով չեն հետաքրքրվում, թէ ինչ է կատարվում ի-
րանց չորս կողմում: Շատ շատ եթէ մէկը այն-
քան աշխատասէր էր, բացի իր ընտրած մասնա-
գիտութիւնից, կը լսէ դասախօսութիւններ մի քա-
նի ուրիշ առարկաներից եւ, որոնք կապ ունէին
իր մասնագիտութեան հետ: Ամեն ինչ նա սպա-
սում է համալսարանից, իսկ զրոյի ուսումնական
չընանքից օգուտ չէ քաղում: Երբեմն լրագրիւնը
կը կարդայ, կամ գրքեր կը վերադնին մի զրադարա-
նից: Բայց պէտք է խոստովանվել, որ գերմանա-
կան հայ ուսանողները դարձեալ գերազանցում են
Ռուսաստանի հայ ուսանողներից, թէ իրանց աշ-
խատասիրութեամբ և թէ իրանց վարքով: Դրանք
գտնէ համեստ են, ինչ որ սովորել են, սովորել են
հիմնաւոր կերպով: Բայց Ռուսաստանի հայ ուսա-
նողը շատ առարկաներ է սովորում առանց լաւ
մարտելու, և չուտով էլ մոռանում է: Բացի դրա-
նից, զանազանութիւնը մեծ է: Ռուսաստանի հայ
ուսանողը, որպէս իր տեղում նկատեցինք, սովո-
րում է ոչ թէ գիտութեան համար, այլ զիպով
ստանալու համար, որ պաշտօնի մէջ այս և այն
արտօնութիւնը կարողանայ ձեռք բերել, և այս
պատճառով նա վեր է առնում գիտութիւնից այն-
քան միայն, որ կարող է հասցնել նպատակին:
Իսկ գերմանական հայ ուսանողի վրա ազդում է
չընապատը, նա իրան նուիրում է միմիայն գի-
տութեան, — ուսանում է ուսման համար,
առանց որ և ինչ արտօնութիւն աշխի առ-
ջն ունենալու: Գիտութեան առաքելութիւնը—
անա նրա զլխաւոր նպատակը: Նա ծառայում է
մի դրօշի, որի նշանաբանն էր—գիտութիւնը
միայն: Եւ այսպէսով շատերը մեր երիտասարդ-

ներից նշանաւոր եղան ոչ միայն յաջող քննու-
թիւն տալով, բայց նոյն իսկ Գերմանիայում պրո-
ֆէսորի կամ պրիվատ դոցենտի ամբիօս ստանալով:
Թէև գտնվեցան և այնպիսիները, որ վերադարձան
մեզ մօտ առանց քննութիւն տալու, դարձեալ
զանց չառնելով իրանց այցատուսակի վրա տպել
տալ դ օ ք թ օ ռ սիրտըսը...

Չեմ կարող չը յիշել, որ ոմանք մեր ուսանող-
ներից վատ համարում թողեցին Գերմանիայում,
ոչ միայն իրանց վերաբերութեամբ, այլ իրանց
վարքով մրտնդին մինչև անգամ հայ անունը, որ
այնքան փոքր ծանօթ է Եւրոպայում: Խաբելի
պարզով ուտել, խմել և փողը չը վճարել—այդ
արել են ոչ միայն այն ուսանողները, որ դուրի
են եղել նիւթական միջոցներից, այլ նրանք, որ
ստանում էին ծնողներից մեծ փողեր: Այլ ես չեմ
խօսում այն բանի վրա, որ ամեն մի հասարակ
վաճառականի որդին կամ գուհիի գիւղացին իրան
ներկայացնում էր իբրեւ հայոց մի երեւի ազնուա-
կան տոհմից: Այս տեսակ խաբերաններից մէկի
համար պատմում էին, թէ նա իրան կոչում էր
ի շ ի շ ա ն Ա ր ա տ ա յ...:

Ի հարկէ, վերս յիշած տիւրի նկատողութիւն-
ները պէտք է բացառական երկողիներ համարել,
որ աւելի հետեանք են ընտանեկան վատ դաստիա-
րակութեան, որը չէ փոխում հայի զաւակը, երբ
նա ընկնում է մի նոր և աւելի քաղաքակրթված
հայրաբնի մէջ: Բայց առհասարակ խօսելով, գեր-
մանական աշխարհը, գերմանական կրթութիւնը,
գերմանական ուսումը շատ նպատակալարմար է
մեզ հայերի համար, որ ունենք բաւական նմա-
նութիւն գերմանացիների հետ, թէ բնաւորութեան,
թէ սովորութեան, և թէ տնտեսական խնայող,
հաշուող չափաւորութեան կողմից: Հայը ասիա-
կան գերմանացի է: Ինչ որ պակաս է մեզ, կա-
րող ենք ստանալ նրանցից: Մեր նախնիքը Գաե-
նեփոնի օրերում գաղթելու էին խմում իսկ գեր-
մանացին խմում է այսօր: Մեր մէջ նմանութիւն-
ներ կան, ամեն կողմից նայելով:
Նկատողութեան պէտք է առնել մի ուրիշ պայման

և, այն է, գերմանական համալսարանի ազդեցութիւ-
նը օտարազգի երիտասարդների վրա: Նա
վերադարձնում է ամեն ազգին իր որդուն,
աւելի կատարելագործված, աւելի զարգա-
ցած, ոչինչ չը խլելով նրա ցեղական յատկու-
թիւններից, այլ ընդհակառակն, աւելի ամրապնդե-
լով, աւելի հաստատելով: Նա չինացուն տալիս է
լաւ չինացի, ճապոնացուն՝ ճապոնացի, հայաստա-
նուն՝ հայ: Բոլորը միտվում են մի և նոյն համա-
սարանական տաճարի մէջ գիտութեան, իմաստու-
թեան լուսով, բայց իւրաքանչիւր ազգի որդին
կրում է իր ցեղական դրօշը: Շատ ժամանակ չէ
անցել, մի ինչոյ՞ք մէջ, որ ուսանողները տալիս
էին ի պատիւ իրանց պրօֆէսորի, երբ առաջարկ-
վեցաւ իւրաքանչիւրին իր ազգի լեզուով մի փոքրիկ
ճառ կարդալ, և երբ հերթը հասաւ մի հայ համա-
նողի, նա յայտնեց, թէ չը գիտէ հայերէն, ամեն
կայծերը ծանր յանդիմանութիւն ստացաւ: Եւ նա
սրտաւթեւեւ ակսեց սովորել իր ազգի լեզուն, որով-
հետեւ նրանից խոստանալու առեցին, որ միւս տար-
վայ ինչոյ՞ք ժամանակ անպատճառ պէտք է
կատարէ իր ընկերների ցանկութիւնը:

Պէտք չէ մոռնալ և այն, որ գերմանական և
առհասարակ արտասանմանն զիպովները որ և
ինչ արտօնութիւն չը տալով ուսանողին Ռուսաս-
տանում, նրանք վերադառնալուց յետոյ ստիպված
են լինում ընտրել ազատ պարագմունքներ: Եւ
այսօր ուրախալի է տեսնել, որ նրանց մեծ մասը
ազգային գործիչներ են: Մեր դպրոցները նշանաւոր
վարժապետները, տեսուչները, մի աշխատանք
լուրջազգիւններ, բոլոր գերմանական համալսարան-
ների պատերից են:

(Կը շարունակվի)

զահ կարաւոր. հանել էք տաճկական հին հան-
դերձները և հազել էք նոր մօղայի շորեր. լապ-
տերներով լուսաւորել էք ձեր ցնխոտ փողոցները,
բայց արդեօք փոյթ տարել էք և ներք ուստ
նոր մարդ դառնալու, ազգային առաքինութիւննե-
րով զարդարվելու, հայ մարդու այս օրվայ պար-
տաւորութիւնը ճանաչելու—արդեօք խնամատար
եղել էք ազգային կրթութեան մասին: Եւ ան-
կէտի փառահնդ եկեղեցիներ, որոց բակի շրջա-
պատները համար անգամ տաճկական հազարներ կը
վառնէք, մինչդեռ կրթված քահանաներ, դպի-
ներ չունիք. ձեր վարժարանները աղքատ են և
զրամով աշակերտներ ընդունելու հարկի մէջ: Վար-
ժարանն և եկեղեցին մի են. միթէ եկեղեցու դռ-
ներն ևս փողով կը բացվին: Ոսկեզօծ մոմեր կը
վառէք հազարներով, բայց արդեօք կը մտածէք
գէթ և մի մօմ վառել խաւարի մէջ մաշվող ձեր
հայ եղբայրների խաւքի լուսաւորութեան
թէ և ան համար: Մինչ զուր ճոխութեան
մէջ փարթամ կեանք կը վառէք, բուն
Հայաստանի հարազատ գաւառները արին
քրտինքով հայրենիքի համար կը նահատակվին:
Այս նահատակութեամբ նոքա ամբողջ Եւրոպայի
կարեկցութիւնը գրաւեցին: Վերջապէս ծագելու
վրա է և մեր տառապալի ազգի փրկութեան ար-
շալոյսը, հայ ազգի անուան պարծանքով կը յիշվի
այսօր, բայց որին է այդ պարծանքը—այն ա-
րիւնաւթաւ և ցնցոտ, այն մերկ ու քաղցած,
այն հայրենիքին մինչև յետին շունչը հաւատա-
րիմ մնացող խեղճերի, և ոչ թէ ձեր, որ
ոչինչ արած չէք և տակաւին չէք անում հա-
յութեան համար: Գիտած եղէք, որ այսուհետեւ
զուր պարտական էք մտածել և նոքա վրա, եթէ
չը կամիք արժանարժեք անել փրկութեան ար-
կան էք: Օգնել նոքա զրամով, առանց կարծելու,
թէ այդպիսով ողորմութիւն արած կը լինիք—որ,
այդ ողորմութիւն չէ, այլ ձեր անհրաժեշտ պատըն
է, հատուցէք այդ պատընը ձեր արիւնակիցներին
և շատ հատուցէք: Գուր առաջ այս տեղէն Սօսի-
վա երկրաւոր համար երկու շաբաթ կը գործածէիք,
այժմ նոյն ճանապարհը երկու օրվայ մէջ կանց-
նէք—ամենայն ինչ արագ յառաջ կընթանայ այս
օր: Նոյն արագութեամբ պարտական էք աւաթիկ
հող տանել և ձեր ազգային գործերի համար, այլ
ոչ թէ չարով ծանրաբալ չէլերով, ուղեւորով և
կամ եղբայրդ այլաճակ սպելով... և այլն: Եկող
շաբաթ ես խոսելու եմ Աստուածածնայ եկեղեցու,
ասաց քարոզիչը. բայց երբ այն տեղ եւ ժողովուր-
դը բացակայ գտանվի այսօրուայ պէս, ես կու-
գամ ձեր ետեւէն և կը գտնեմ ձեզ ձեր շրջապատ-
ութեան մէջ: Երկար կը լինի հայր սուրբի մերթ հա-
մուրդը և մերթ երգիծական, մերթ լուրջ և մերթ
ծաղրական քարոզի բովանդակութիւնը պատմելը,
մեզ թւում է, որ եթէ նա փոքր ինչ երկար մնայ
այստեղ, անշուշտ կը տաքացնէ ժողովրդի սիրտը,
որ կարօտ է մի այդպիսի եռանդուն քարոզչի,
որ համարձակ յիշեցնէ նորան իր ազգային պար-
տաւորութիւնը: Մենք համազօր ենք, որ եկող
կիրակի եկեղեցին լի կը լինի ժողովրդով, որով-
հետեւ նա միշտ սիրում է լսել կենդանի խօսք, և
որքան նա ստուն է դէպի իր անկիրթ տէրտէրները,
նոյնքան պատրաստ է ջերմ մէջ ընծայել այն հո-
գեւորականին, որ գիտէ կենդանի հաց տալ նորան
քարի կամ օձի տեղ: Մենք և փոքր, կանայք և
այդ մարդիկ, մանաւանդ կանայք հրապուրված
են հայր սուրբի քարոզիչ և ասում են, որ երջա-
նիկ կը լինեն, թէ որ գէթ մի այսպիսի հոգեւո-
րական ունենալին ամբողջ քաղաքում լսելու: Արծ.
հայր Ստեփանէն չը կարացաւ այն «տօնը» գտնել
մեր ժողովրդի հետ խօսելու որ հարկաւոր է սո-
րա վրա տպաւորութիւն գործելու համար. նորա
քարոզը թէ և շատ գեղեցիկ, բայց վերացական էր.
այն ինչ հ. Ամբրոսիոսի քարոզին ակամօլ դնելու
ժամանակ կարելի է երեսկայել, թէ առջեւ խօ-
սողը հ. Ալեքսանդր Գալացին է, Գարիբալդի
այն ժր և ազգաւոր օգնականը:

րից, որ նրանցից իւրաքանչիւրը տարեկան 5—25
րուբլ աւելորդ փող է տուել ուստաբաշուն: Այժմ
տաճկաստանի հայթիւնները իւրաքանչիւրից 3
րուբլ է պահանջում հացերը փողոցներում մանա-
ծելու համար, մինչդեռ տաճկաստանի հայթիւն-
ները պարտաւոր չեն, ինչպէս իրանք գրում են,
վճարել այդ տուրքը: Երբ հայթիւններից մէկը
ննջեցեալի վրա կանչված է լինում և որ և է
պատճառով չէ կարողանում ներկայ գտնվել, իւ-
րաքանչիւրից 3—5 րուբլ տուրք է առնում:
Հայթիւնները արդէն զանգառով են տաճկա-
հիւպատոսին, որ խոստանում է գործը նահանգա-
պետին ներկայացնել: Հայթիւնները խնդրում են
Թիֆլիսում հրատարակվող բոլոր լրագիրների
խմբագրութիւններից արտատպել այս լուրը:
Հայթիւնների գլխաւորի ազգանունը Աբրահամ
Խաչիով է:

Մեզ հաղորդում են ԵՐԵՎԱՆԻՑ, որ տեղական
հայոց թատրոնում սիրողները ներկայացրել են
«Ոճրագործի» ընտանիքը դրամա 5 արարուածներով
թարգ. Ա. Միլեանի: Ներկայացումը տուել են յո-
գուտ Գայանեան օրիորդաց ուսումնարանի:

Մեզ հաղորդում են ԵՐԵՎԱՆԻՑ, որ հոկտեմբե-
րի 28-ին մի քանի երիտասարդներ ժողով են կազ-
մել մշտական թատրոնաշէնքերի մի խումբ կազ-
մելու համար: Ժողովի մէջ հարց է բարձրացել,
թէ ում օգտին տան ներկայացումները: Երիտա-
սարդները մի մասը առաջարկել է թատրոնական
ներկայացումներից ստացված եկամուտը յատկաց-
նել Սահականուհեան և Գայանեան օրիորդակա-
նայիններին, միւս մասը կամեցել է, որ եկամու-
տը միայն Գայանեան ուսումնարանին տրվի:
Խումբը կազմվել է միայն հայր Միլեանի կուսա-
կիցներից, որոնք յօգուտ Գայանեան ուսումնարա-
նի կը տան ներկայացումներ:

Մեզ հաղորդում են, որ ԹԻՖԼԻՍԻ հրապարակ-
ների վրա և մասնաւոր տեղերում այժմ ծախվում
է մեծ քանակութեամբ դառնացած և բոբրոսած
ալիւր: Ժողովրդի աղքատ դասը, խաբվելով մի
քանի աղաթի է ժամութիւնից, գնում է, և հացը
ուտելով, անմիջապէս հիւանդանում է: Պօլիցիայի
ուսուցիչներն ենք դարձնում այս խաբէութեան
վրա:

Վ. ԱԳՈՒԻՍԻՑ հաղորդում են, թէ հասարա-
կութիւնը սատիկ զարացած է դպրոցների այժ-
ման կարգադրութիւնների վրա: Առաջ սովորու-
թիւն է եղել, որ աշակերտները և աշակերտուհի-
ները մինչև ծաշ կարգում էին, յետոյ գնում էին
իրանց տները, հաց էին ուտում և կրկին վերա-
դառնում էին դպրոց, ուր աշակերտները վերա-
կացումների հսկողութեան ներքոյ միւս օրվայ
դասերն էին պատրաստում, կամ սերտողութիւն
էին անում, իսկ աշակերտուհիները վարժուհիների
հսկողութեան ներքոյ պարապում էին ձեռագոր-
ծութիւնով: Իսկ այժմ նոր տեսակ է իր հանգըս-
տութեան համար բոլորին արձակում է, և աշա-
կերտները ծաշից յետոյ լցնում են բազարը և ան-
վայել խաղեր են անում: Նամակագիրը դարձանք
է յայտնում, թէ ինչ հարկ կար 1800 րուբլով
հրաւիրել մի տեսուչ, որ ամեն օր զանգառով
է իր հիւանդութեան մասին. միթէ Ագուիսի
բարակացաւ բժշկելու տեղ է:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԿԱՊՈՅՏ ՏԵՏՐԱԿ

Թայմը լրագիրն, որ ինչպէս յայտնի է՝ Լորտ
Պիլքոնսթիլտի նախարարութիւնը պաշտպանող
թերթ մ'է, հոկտ. 38 թուոյն մէջ հետե-
ւեալ յօդուածը կը հրատարակէ վերջին Կա-
պոյտ անտրակին վրա:

«Ասիական Թուրքիոյ ողբալի վիճակն, որ և
իցէ լուրջ առարկութիւն չը կրնար վերցնել:
Որ աղբիւր տեղեկութիւն առնուի, ամեն
ալ մի և նոյն եղբակցութեան կը յանդիմ-
նէ: Փոքր Ասիոյ և Թուրքիոյ մէջ ժողովրդեան
վիճակը մակազգով վերջերս հրատարակեալ
Կապոյտ անտրակին, որոյ պարունակած տեղե-

կազարաց ոմանց վրա արդէն քաղուած մը հը-
րատարակեցինք, կամ Փոքր Ասիա գտնուող
մեր թղթակցաց նամակներն, և կամ Սըր Հ.
Լէյարտի վերջերս Սուրիա ըրած ուղեորու-
թեան վրա մեզ եկած տեղեկութիւնք, և
կամ՝ վերջապէս՝ Փոքր-Ասիոյ մէջ ուղեորու-
թիւն ընող անկախ անձի մը մեր այս
աւուր թուով հրատարակեալ նամակն, ասոնք
ամենն ալ նոյն յոռի վարչութեան, անգղա-
յութեան, և անկան վիճակին նկարագիրը
կրնեն: Առևտուրն անդամաւորեալ է, կենաց
և ընչից ապահովութիւն չը կայ, երկրագոր-
ծութիւնը յետադէմ և խեղճ վիճակի մը մէջ
կը գտնուի, հաղորդակցութիւնը ընդհատեալ
են՝ լաւ ուղիներ չը կենայուն պատճառաւ,
ժողովուրդը կը տառապի, դատարանը կաշա-
ռակու անձանց ձեռք են, վարչութեան ա-
նունը միայն կայ, աղքատութիւնն ընդհա-
նուր է, ամեն կողմ յուսահատութիւն կը
տիրէ: ձշմարիտ է որ Սըր Հ. Լէյարտ Սու-
րիոյ մի քանի բաղաւոր գաւառները տեսաւ
որք հանդէս կը կատարէին իւր զայտեսան
առթիւ, և նշանակութեան զուրկ չէ որ
դեսպանը՝ Միտհատ փաշայի ազդու և կա-
րող վարչութեան ներքեւ յառաջդիմութեան
ու բարեօրոն նշաններ երևան գալը նշմա-
րած է: Բայց Սուրիոյ մէջ կեցած բարեօր-
ման նշանները տակաւին բացատրութիւն մ'են
ստիական Թուրքիոյ ընդհանուր վիճակին հետ
բաղդատմամբ, և եթէ, ինչպէս կըսուի, Միտ-
հատ փաշան հրաժարական տուած է, այդ
նշաններն ալ հաւանականաբար տեական չը
պիտի լինին: Միայն անցեալ յուլիս ամսոյ մէջ
էր որ մեր դեսպանը՝ Սուրիոյ դատական իշ-
խանութեանց ամենն անկարող և յոռիներէն
երկու անձի պաշտօնանկ լինելը կարողացաւ
ճանուցանել. մինչդեռ ամիսներ առաջ դիտո-
ղութիւն ըրած էր Բ. Իրան թէ այդ երկու
անձերուն նախազգած դատարանաց առջև
նոյն իսկ անգղիացւոց դատերը չէին տես-
նուած և անոնց գոհացում չէր տրուած:

«Միւս նահանգներէն ալ յոռի վարչութեան
և անգղայութեան զանգառներն ընդհանուր
է միաձև են: Արդարեւ, ժողովրդեան ամե-
նամեծ մասն եղական կերպիւ հլու և համ-
բերող է: Սերաստիոյ ընդհանուր հիւպատո-
սութիւնը գնդապետը կը գրէ թէ, Երբեք ամենա-
մեծ մասն հանդարտ և խաղաղ վիճակի մէջ
տեսնելով չը զարմանալ անհար է: Երբ ամեն
պարագայը, կանոնաւոր զօրաց կատարելապէս
բացակայութիւնն, և իրականապէս ոստիկա-
նութեան ալ բացակայութիւնն ի նկատ առ-
նուի՝ զարմանալի կը թուի որ աւաղակու-
թիւնը և բռնութիւնը աւելի չեն, և կը
հասկնայ թէ՛ Առաւելարութեան կողմէ փոքր
ջանքով մը հնար պիտի լինի ամեն կողմ ա-
պահովութիւն հաստատել: Բայց դժբաղդա-
բար, այդ փոքր ջանքն իսկ մինչև ցարդ չէ
եղած: Հետզհետէ աւելի աղքատութեամբ
յանդիմանութիւններ լինելուն հակառակ՝
Իուռն անտարբեր ու անզգայ կը մնայ: Նա-
հանգի մը մէջ կաշառակուր դատաւորի մը
պաշտօնանկութիւնն, ուրիշ նահանգի մը
համար նոր կառավարչի մ'անուանումն, և
երրորդ նահանգի մը համար ալ լաւ կազ-
մեալ, բայց իրապէս ո և է արտօնութիւն չու-
նեցող յանձնակալի մը զրկուիլն, ահա ասոնք
են բոլոր այն միջոցները զորս Իուռն մինչև
ցարդ ձեռք առած է Փոքր-Ասիոյ վերածը-
նութեան համար: Բայց միւս կողմէն, դարե-
ման և անպատիւ մնալով՝ աւելի կը սաստ-
կանան և մինչև իսկ կը քաջակրօն վերջե-
րա Սամանեան կառավարութեան բռնած ան-
խօհեմ ընթացիւքն, որ հազարաւորներով
անկասկած Զեքէյներ սանձարձակ Փոքր Ասիա
զրկեց, որպէս զի այդ արդէն վնասեալ երկրին
վրա խուժելով աւարաւորութիւն ընեն:

«Փոքր Ասիոյ մէջ գործող վիճակն վրա ե-
կած ամենավատեւրական տեղեկութիւնն այս
տխուր նկարագիրը կրնեն: Ձեռք զարմանա-

տեսնելով որ այդ երկրին տարաբաղդ բնակիչ-
ներն, ինչպէս ամէն առաջ, այժմ ևս կը
հարցնեն թէ Անգղիացիք երբ պիտի գան:
Վերջերս այդ կողմեր պտըտող ուղեորը լը-
ջապէս կը պահանջեն որ Անկիւսթիւրը պայ-
մանագրին այնպիսի ձև մը տրուի, որ զայն
շինողներուն անգամ մտքէն չէր անցներ: Այդ
պայմանագրին մէջ Սուլթանին խոստացածն
էր՝ «Առաւելարութեան բարեօրոն և Իրան
թէ՛ քրիստոնեայ և թէ՛ ուրիշ հպատակաց
պաշտպանութեան համար բարեկործաններ
ներմուծել, որք յետոյ երկու տերութեանց
միջև համաձայնութեամբ պիտի որոշուին:»
Այդ խոստումն ստուգիլ մինչև ցարդ չը գոր-
ծարկեցաւ. բայց ասոր անգործադրութեան
յանցանքն ո՛չ Անգղիական կառավարութեան և
ո՛չ ալ Կ. Պօլիս գտնուող իւր ներկայացուց-
չին վրայ կրնայ ձգուիլ: Այս վերջինը կրկին
և կրկին անգամ ամեն ազդու յանդիմանու-
թիւններ ըրաւ Իրան իշխանութեանց, բայց
իւր յայտարարութիւնը մինչև ցարդ իրական
արդիւնք մը չունեցան: Կը մնայ տեսնել թէ
ինչ արդիւնք յառաջ պիտի գայ այն երմտա-
կան բողոքէն, զոր մեր Կ. Պօլսոյ թղթակցը
կը ծանուցանէ այսօր, և որ կրնայ նշան մը
համարուիլ թէ աւելի կտրուկ ընթացք մը
բռնուիլ սկսած է:»

(Կը շարունակվի)

«ՄԵԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՆԻՑ

ՓԱՐՔ, 15[27 նոյեմբերի: Պատգամաւոր-
ները ժողովի 1880 թվականի բիւրոյի
մասին յայտարարութիւններ կայացվեցաւ ա-
նապէս: Պ. Իսմայիլով մի ճառ խօսեց, որի
մէջ նա շնորհաւորեց հայրենիքին կոնգրէսի
այն վճռով, որը վերադարձում է Փարիզին
մայրաքաղաքի իրաւացի կոչումը, որը կը լինի
ազգային միութեան կապը: Կառավարութիւ-
նը այժմ գետեղված է այնտեղ, որտեղից
միակ հնարաւոր է հեղինակութեամբ կա-
ռավարել, կոնգրէսի վճիռն ապացոյց է նրա
դէպի Փարիզի բնակիչներն ունեցած ողջա-
մտութեան ու ազգասիրութեան հաւատար-
մութեանը, —սա կը դիւրացնէ օրէնսդրական
աշխատութիւնները: Սրանից յետոյ պ. Գամ-
բետան խնդրեց ժողովին հեռացնել կրքոտ
խնդիրները, և բոլոր ջանքերն ուղղել դէպի
բարձրագոյն նպատակ—այն է դէպի հայրե-
նիքի մեծութիւնն ու հանրապետութեան
հաստատութիւնը: Միւսներն ազգային
ժողովին մի քանի ծրագիրներ ներկայացրին,
որոնց թւում և պահանջում էին նրանք 80
միլիոնի կրեդիտ երկրորդական ճանապարհ-
ների շինութեան համար: Բոնապարտեան էն-
ժան հարց բարձրացրեց, թէ ինչ միջոցներ
են գործ դնում ստացնալին երկրորդված ազ-
գայնականութեան օգնելու, և պահանջեց, որ
հասարակաց աշխատութիւններին աւելի ըն-
դարձակութիւն տրվի, և ներմուծված հացի
վրա գրված հարկը փոխվի: Առևտրական մի-
նիստը պատասխանեց սրան ասելով, որ կա-
ռավարութիւնը խնդրում է ազգային ժողո-
վից, որպէս զի նա կարելի եղածին չափ
շուտ վճռէ օրէնքի բոլոր այն ծրագիրները,
որոնցից կախված է ազգայնականութեան բա-
րելաւորութիւնը: Այս մասին առանց երկար ու
բարակ վիճարկութեան, ժողովը խկցեց ան-
ցաւ օրական հարցերին:

ՅԷՏԻՆԻ: 15[27 նոյեմբերի: Գուսնեան
նահանգում ալբանցիներն սպանեցին Սուլա-
տար փաշային:

ՊԵՏ, 15[27 նոյեմբերի: Ֆրանց-Յոլմէփը
ազատեց Միլեթիւնի մնացած տասնուհինգ
տարուայ բանտարկութեանից:

Խմբագիր—հրատարակող ԳԻՐԳՈՐ ԱՐՄԵՐՈՒՆԻ

въ 1880 году.

Вслѣдствіе увеличенія числа номеровъ газеты, подписная цѣна на газету нѣскольکو измѣняется. Годовая подписка назначается: въ Тифлисѣ (съ доставкою на домъ)—12, съ пересылкою по Имперіи—13, съ пересылкою по почтовому союзу—18 руб.

ОТКРЫТА ПОДПИСКА

на 1880 годъ

НА ЕЖЕДНЕВНУЮ, БЕЗЦЕНЗУРНУЮ, ПОЛИТИЧЕСКУЮ И ОБЩЕСТВЕННУЮ ГАЗЕТУ

РУССКІЙ КУРЬЕРЪ

Газета будет выходить ежедневно, в формат наших больших газет, по следующей программе: постановления и распоряжения правительства; телеграммы, обзор политических событий и общественной жизни; обсуждение вопросов дня; военные известия; мнения русской и иностранной печати по данному вопросу и сущность руководящих статей; иностранные известия по русским и заграничным источникам; известия из славянских земель. Жизнь России: наши домашние дела; корреспонденции; народное образование; внутренние известия; хроника; хроника научная, литературная и художественная; театральная и музыкальная известия; судебная хроника. Исторический листок; разные известия; биржевые, железнодорожные, торговые и др. сведения; справочные известия.

Подписная цѣна съ пересылкой и доставкой въ Москвѣ и на города:

На годъ	6 руб.
„ полгода	4 „
„ 3 мѣсяца	3 „
„ 1 мѣсяцъ	1 „

З а г р а н и ц у п л а т а в д в о е.

ПОДПИСКА ПРИНИМАЕТСЯ: въ Москвѣ, въ конторѣ редакціи газеты „РУССКІЙ КУРЬЕРЪ.“ Столѣшниковъ пер., д. Рожнова; въ конторѣ изданія газеты—у Москворѣцкаго моста, въ д. Н. П. Ланіна, въ его конторѣ, и у всѣхъ извѣстныхъ книгопродавцевъ Москвы въ С.-Петербургѣ—въ книжномъ магазинѣ Исакова и картографическомъ заведеніи Ильина.

Гг. иногородные благоволят адресовать свои требования исключительно в контору изданія газеты „РУССКІЙ КУРЬЕРЪ“—Москва, Москварыцкій мостъ, домъ Ламина, при ея конторѣ.

Иногородные адресуют свои требованія въ Тифлисъ, въ редакцію „Тифлис-
скаго Вѣстника“.

Въ Тифлисѣ подписка принимается, кромѣ конторы газеты (Эриванская площадь, д. № 3), въ газетномъ агентствѣ Шавердова.

Կենտրոնական Գրավաճառուչ ուղղում Դվերցովոյ փողոցի վրայ, Արծրունու Գալլերեյում
վաճառվում են Հետեւեալ նոր գրքերը:

- | | | | | | |
|--|---|----|------|-------|-------|
| 1. | Կարմիր լապտեր, փոքրիկ մանկանց ընթերցանութեան համար. | գ. | — | բ. | 50 կ. |
| 2. | Թարգ. օր. ն. Տէր-Մարկոսեանի պատկերազարդ և կազմած. | — | » | 30 կ. | |
| 3. | — նոյնը առանց կազմի. | — | » | | |
| 3. | Թաւամաղ մեղու փոքրիկ մանկանց ընթերցանութեան համար. | — | » | 40 կ. | |
| Թարգ. օր. ն. Տէր-Մարկոսեանի. | պատկերազարդ և կազմած. | — | » | 30 կ. | |
| 4. | Նդրայր և քոյր մանկական վէպ. Թարգ. Զ. Մսերեանի պատկերազարդ | — | » | | |
| 5. | Հակայական ձեռքեր. մանկական վէպ, Թարգ. Զ. Մսերեանի, պատ- | — | » | 10 կ. | |
| կերազարդ | | | | | |
| 6. | Փարոս Հայաստանի. պատկերազարդ հանդէս ընտանեկան ընթեր- | 1 | — | կ. | |
| ցանութեան համար. | | | | | |
| 7. | Թորոս աղբար Հայաստանի ձանապարհորդ. Գործ. Գ. Վ. Սրու- | 1 | » | 25 կ. | |
| անձտանց | | | | | |
| 8. | Նրկունը իններորդ դարու գործ Սերեցի | 1 | » | — կ. | |
| 9. | Պատանեկան ներշնչումներ, գործ. Հրատէ Սաաաուրի. | — | » | 60 կ. | |
| 10. | Մի կաթիլ արտոյր, գոր կը հեղու Սիսակ Հայ մելիքին վրայ | — | » | 35 կ. | |
| 11. | Սամուէլ Մուրատեանի կտակի խնդիրը, դասախօսութիւն Ս.Ար- | — | » | 50 կ. | |
| ժուռու. | | | | | |
| 12. | Ուսումնարանի առողջապահութեան հարցեր, բժ. Ա. Բարայեանի | 1 | — | կ. | |
| 13. | Մարմնակազմական կամ անատոմիական բառարան Լատինե- | 1 | » | — կ. | |
| րնից և Ռուսերէնից Հայերէն. բժ. Լ. Տիգրանեանի | 1 | » | — կ. | | |
| 14. | Կրօնը. հոգեբանական հետազոտութիւն Ս. Մանդեկեանի | — | » | 40 կ. | |
| 15. | Հայկական Թատրոն. Վուլքի իմ վեչեր, Ֆարս երեք պատկերով | — | » | | |
| գործ. Մ. Տէր Դրիգորեանցի | | | | | |
| 16. | Բեքեր բիձու հանաքը. Սպերտա մի գործողութեամբ, Թարգ. Ն. | — | » | 25 կ. | |
| Լալայեանցի | | | | | |
| 17. | Աշխատայն երեկոյ գիւղում, փոքրվել մէկ արարուածով, փոխա- | — | » | 25 կ. | |
| դրութիւն Գ. Շահբուդաղեանի | | | | | |
| 18. | Բռնի ամուսնութիւն. կոմեդիայ մէկ արարուածով, Թարգ. Գ. | — | » | 40 կ. | |
| Չմկեանի | | | | | |
| 19. | Ժանօ և Ժանկա օպերա-փոքրվել, Թարգ. Գ. Շահբուդաղեանցի | — | » | 40 կ. | |
| մէկ գործողութեամբ | | | | | |
| 20. | Պէպօ. կոմեդիա երեք արարվածով, գործ. Գ. Սոււրուկեանի | — | » | 30 կ. | |
| 21. | Պատաներին խրատ. փոքրվել մէկ արարվածով Մ. Տէր Դրիգորեանի | — | » | 50 կ. | |
| <p>Նոյն տեղը վաճառվում են ամենայն տեսակ դասադրեր Հայերէն, Ռուսերէն և օտա-</p> <p>ւերէններ, դասական պեոդներ ուսումնարաններ, և աշակերտների համար, Հայերէն, Ռու-</p> <p>սերէն և Գաղիերէն լիպատանութիւններ, ամենայն հասակի ընթերցանութեան և գիտու-</p> <p>թեան գանադան ճիւղերին վերաբերել պրքեր, պատուէրները կատարվում են ամենայն ար-</p> <p>դութեամբ: Օտարաբաղադրացիք իրանց պահանջները պէտքէ ուղարկին հետեւեալ հասցեա-</p> <p>լը.</p> | | | | | |
| <p>“Въ Тифлисъ. Въ центральную книжную торговлю”</p> | | | | | |

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՆՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԳՐԱՍԵՆԵԱԿ

բոլոր եւրոպական լրագրիչների համար Մոսկվայում (Центральная контора объявлений для всех европейских газетъ въ Москвѣ, Большая Дмитровка, д. Вучумова) գտնու-
նուիս է յայտարարութիւններ բովոր ռուս և արտասահմանեան լրագրիչներէ համար խմբա-
բանեան գտնուիւ. նշանաւոր քիճճութեանով:

Գրական Ինստիտուտի, Երևանի Մանկավարժական ինստիտուտի, Երևանի Մանկավարժական ինստիտուտի և Ճարտարապետության ինստիտուտի ղեկավարները և ճարտարապետները իրենց լիարժեք մասնակցությունը ցուցաբերեցին համապատասխան հանձնարարություններում և արտասահմանյան ծրագրերում։

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԱՆՎԱՐՁ ԵՆ ԿԱԶՄՎՈՒՄ:

3-15 (4)

ՄԱՄՈՒԼԻ ՏԱԿ ԵՆ,

Մ Ե Տ Ա Դ Ի Ր Ե Ի Փ Ո Ք Ր Ա Դ Ի Ր

0 6 4 3 0 3 3 6

1880 p.

... Գոր Հեռա

Հանդերձ չորս նոր հետաքրքրական պատ-
կերներով

Մ ա ղ ե կ Ը ն տ ա ն ե ա ց ե. տ. յաւելու
աճով: Որովհետեւ մենք արդէն բացեցինք եւ
Քրիստոսը սեփական տպարան, ուստի մեր
ՈՐԱՅՈՑՅՆԵՐԸ կը լինեն տպարաստ ԴԵԿՏԵՄ
ԲԵՐԻ ՄԵՐ:

Գումարով գնողաց զիջումն կը լինի: Սեր
տպարանում ընդունվում են չափաւոր գներով
ԱՐԻՆ՝ ՏԵՍԼԱ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆՔ:

Ա. Գուламирянцу. Արգար Գուլամիրեանց

4-5

ԱՐԱՄԱՑԱՑԱՆ ԱՐԲՆՅՈՒԹԵԱՆ և Նրա
ապրապիլի Տեղեկանքների առաջին առնելը
Համար ՄԻՋՈՅՆԵՐ և ցոյց տալիս և ԽՈՐ
ՀՈՒՐԳՆԵՐ և տալիս Կայսերական զեղազոր
ԳՇԻՀԱՑԻ (Gchihay) Գրացայտի Շտիրա նա-
մակներ կարելի է գրել ռուսաց, գերմաներեն
և Ֆրանսիերեն լեզուներով: Պատասխանները
Համար պէտք է փոստային ՄԱՐԿԱՆԵՐ ու-
ղարկել:

2—3 (5)

ԹԻՖԼԻՍԻ՝ ՔԱՂՎԱՔՍԻՆ ԿԱԶՈՐՈՒԹԻՒՆԸ
յայտնում է, որ իր ներկայությամբամբ լինելու են
հետևել վճռական աճուրդները տասնյգ կրկնա-
հուրիքի. 1) նոյեմբերի 24-ը՝ առաքարի քաղաքային
մայրամասից մի բաժինը 1890 դեհետմին մեծու-
թեամբ և մի ուրիշ բաժինը՝ 257 դեհետմին մե-
ծությամբ կապարով տալու: Ժամանակամիջոցը
1883 թ. յունվարից մինչև 1883 թ. յունվարի 2)
Դեկտեմբերի 7 (1879 թ.)՝ Կուր գետի վրա ջա-
ղաքի դժի մէջ բերվող գերանների եկամուտի ըս-
տանալը կապարով է տրվելու: Ժամանակամիջոցը
1880 թ. յունվարի 26-ից մինչև 1883 թ. յուն-
վարի 3) Դեկտեմբերի 7-ին 1879 թ. վերայից
վերև գտնված նաւը կապարով տալու համար:
Ժամանակամիջոցը 1880 թ. յունվարի 26-ից մին-
չև 1883 թ. յունվարը: 4) Դեկտեմբերի 4-ին 1879 թ.
կառապաններից տասնյգված եկամուտը կապարով
տալու համար: Ժամանակամիջոցը 1880 թ. յուն-
վարից մինչև 1883 թ. յունվարը: 5) Դեկտեմբերի
1-ին 1879 թ. հիմնիցից յոգուտ ջրաղաքի տաս-
նյգված մուտքը կապարով տալու ժամանակամիջոցը
1880 թ.ուականի յունվարի 1-ից մինչև 1883 թ.ը-
ականը: 6) Դեկտեմբերի 5-ին 1879 թ. քաղա-
քային կիւտի տասնյգված եկամուտը կապարով
տալու համար: Ժամանակամիջոցը 1880 թ. յուն-
վարի 26-ից, մինչև 1883 թ. յունվարի 1-ը: Այս
բոլոր կապարների պայմանները ցանկացողների
կարող են տեսնել քաղաքային վարչութեան մէջ
ամսն օր, քաղից տեսն օրիցից ամառատեան 10 ժա-
նը մինչև 2-ր կեսն օրից յետոյ:

1-9

Մի երկուստարդ, որ երկար ժամանակ է ի
եր պարպել է պրատիկայով, կամենում է
հասնաւոր ընտանիքներում կամ ուսումնարան-
ներում կրկնութիւններ անել զինազգական
տղեր առարկաներից: Հասցէն Հարցնել ՄԵՐ
տակի խմբագրատանը:

Типографія А. А. Михельсона